



ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պուլխարիոյ համար  
 Տարեկան 12 մր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արտասահմանի համար  
 Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 մր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԱՄԵՐԻԿՎԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

Մանուգրան սոյր առաջին  
 հրեսին համար 40 սակրի.  
 Է. իսկ վերջին երեսի համար  
 20 սակրիս Է. երեսին  
 աւելի ակգաւներու համար  
 20 ՍՈ զնդը կըլլայ:

Վառնայի համար ձեռքի 10 սակրիս

# ՇԱՐՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 Ը ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՕՐԵՐԸ

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

Իրաւթիւս չեն տրուի  
 Արտասահմանի ձեռքի  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )  
 Պուլխարիոյ համար ձեռքի  
 = 15 ՍԱՆԹԻՄ =

ՇԱՐՄԻՍԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԻ

## ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԻՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգացին մեր նախորդ ազդերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու տնտեսները պիտի յայտարարուի Շարժումի մէջ: Դանուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ. Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակը տրուի ժինչեւ դեկտ. 15ը: Մինչեւ այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի հրատարակենք:

## ԿԸ ՍԻՐԵՍ

(-0-0-)

- Կը սիրեմ ծովը ցատկոտ ու յամառ,
- Որ ժայթքէ խրոխտ փրփուր յատակէն,
- Եւ լոյճ կաթիլներ, որ ժայտեր քակեն,
- Յարատեւ, անզուլ կռուելուն համար:
- Կը սիրեմ անհուն շողը երկնային,
- Արծաթ եթերքի շիկնոտ ասպերու,
- Որ երկրի աղտէն, տանջանքէն հեռու
- Լպիրը բռնութեան բարձրէն կը նային:
- Կը սիրեմ հզօր արծիւը, անպարտ Յաղթութեան փառքին, հեշտանգին գիտակ,
- Որ անկախ կեանքի ջինջ երկնքի տակ,
- Սեպացած ժայռին կը թառի հպարտ:
- Կը սիրեմ կոյսը, որ սիրատուոր, Շրթունքին ունի որքին գուրթ,
- Ժպիտ,
- Մինչդեռ պահած է տիրանին կոպիտ,
- Զգուանքի խորին փոթ մը ժանտ ու չոր:

Եւ սէգ քաջերը որ բիրտ ուժին դէմ,  
 Յանդուգն կռուի տենչով կարշաւեն.  
 Անգոր տկարին այդ վեհ ապաւէն,  
 Սիրելը բաւ չէ՛, կ'երգեմ, կը պաշտեմ:  
 Վե՛ՏԱ  
 Վառնա 7 նոյեմբ.

## ՀԱՅ ԿԻՆԸ

19երորդ դարի երկրորդ կիսի վերջերում հայ կեանքի աչքի զարկող երեւոյթներէն մէկն էլ այն եղաւ, որ արեւելքի նախապաշարուններով ու տգեղ սովորութիւններով կաշկանդուած հայուհին ճիգեր թափեց դուրս գալու հարեմական ստորացնող պայմաններէն եւ մեր հասարակական կեանքի մէջ դեր խաղալու:

Հայուհին իր զարթնումի նախնական փուլի մէջ սկսեց զպրոց յաճախել, կրթութիւն ստանալ. մի քիչ յետոյ նա վարժուհի դարձաւ, գրականութեան մէջ էլ երեւացին մի երկու հայուհիներ, յեղափոխութեան մասնակցեցին աւելի շատ թուով: Դրանք ամէնը միութարական նըշաններ էին մեր կանանց զարթնումի: Սակայն հայուհու վիճակի արմատական բարեփոխման հարցը, նոյն իսկ իրենց հայուհիներէ ձեռքով այդ հարցը մշակելու գաղափարը մինչեւ օրս ոչ մի կին չէր յղացել եւ թէ յղացել էր, քաջութիւնը չէր ունեցել նրան գործնական հողի վրա դնելու ճիգերը թափել:

Այսօր, փարաւոնների երկրում մի հայ օրիորդ յազգանում է միմիայն մեր կանանց հարցը մշակելու համար առանձին մի օրգան հիմնել. Արտէմիսը:

Անցեալ համարի մէջ մենք հըրատ օրակցեցինք Արտէմիսի խըմբագրութեան յայտարարութիւնը: Մեզ յայտնի չէ օրիորդ Պէյլէրեանի մտաւոր կարողութեան և այդ տեսակ մի դժուարին գոր-

ծը առաջ տանելու ընդունակութեան չափը, սակայն մեզ համար շատ գնահատելի է օրիորդի արած քայլը:

Ամէն մի ընդունակ հայ կին պարտաւոր է օգնութեան հասնել թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս հայ կնոջ գաղափարապետութիւնը յանձն առնող օրիորդին. ամէն մի հայ մարդ որ ուզում է մեր կանանց մտաւոր հորիզոնը լայնացած և բարոյականը բարձրացած տեսնել, պէտք է քաջալերէ կանանց առաջին ամապրի առաջին օրիորդ խմբագրին:

ՎԱՐՊՕ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշ 5 Սեպտեմբեր

Սիրելի ընկեր,

Թղթակցութիւնս ընդհատուած ուրիշ բան չէ պատճառը, եւ թէ ոչ խտտութիւն, որ յունիսէ սկսեալ կը շարունակուի և ո՞վ գիտէ մինչեւ երբ պիտի տեւէ: Դրութիւննիս նոյնն է ինչ որ էր երկու երեք ամիսներ առաջ. երբէք չէ բարիփոխուած. ընդհակառակը ալ աւելի սաստկացած է. Ամեն օր ընդհարումներ կը պատահին կոմետէի. զօրաց եւ քրտաց միջեւ. վայրկեան մը իսկ տառնց մարդասպանութեան չի անցնիր. գիւղերու աւերումներու քանդումներ ստեղծելու ձեռքով առաջ կերթան. այժմ Մշոյ մօտիկ գտնուած հայ գիւղերն բոլորովին աւերակ եւ անմարդաբնակ դարձած են: Պոլսէն քննիչ անուան պատրուակաւ նորեկ եկած փաշաներն, պահ մը սկսան համոզել հայերին, որ իրենց գիւղերը վերագառնան, ասկէ վերջ բան մը չ'կայ ըսելով, ընդունեն իսկ պիտի բռնուին ու պատժուին, ու ձեռ իրաւունքներն անօնցմէ առնելով ձեզ պիտի վերագառնուին, մինակ թէ դուք համակերպիք ձեռ տեղն վերագառնալ, որպէս զի դուք եւս անոնց նման ըմբոստ

չը ճանչցուիք յայտ կառավարութեան: Ահա այս է մեր վեհափառ Սուլթանի հրամանը, որ ձեզ հազորդսմ:

Իրերք պաշտօնեայի ամէն մէկ խօստուածը որ իրենց կարմիր Սուլթանի անուան ու ստորութեան վրայ է հիմնուած, ատոր համար ալ անկարելի է հաւատալ և այդ պատճառաւ ալ անկարելի եղաւ փախչող գիւղացիներուն համոզել իրենց գիւղերն վերագառնելու. միայն թէ շատ քիչերն հաւատացին իրենց տեղերն վերագառնալ:

Երբ այս վերագառնողներն նոր դեռ իրենց տեղերն հաստատուած պիտի աշխատին արտերու մէջ ձգուած հունձքերն հաւաքելու, յանկարծակի ինքզինքնին չորս կողմէ պաշարուած գտան թիւրք, քուրա և զօրք խառն խուժանէն. այդ դաւադրեալ անընկալէն ըստ բաւականին կորուստ տուին, որոնց շարքին սպանուեցան Առաքի գիւղէն, Կասով տղաներ, Աստուր և Պաղտօն ու Կրուլու Արթին և այլն:

Ահա տեսէք թէ լեշակեր Սուլթանը, երբ իր գործած գազանութեանց մասին նեղի գայ. շուտ մը ճշմարտութիւն քոյարկելու ու հանրային զոգուած կարծիքներն պահ մը եւս մեղմացնելու ու ժամանակ շահելու համար քեռիչ անուան ներքեւ փաշաներ կը զրկէ, այդ տեսակ «ճամպազական» խաղերով Եւրոպացւոց խաբելու, այն ինչ իւր զրկած քննիչներն, զրախալու գաղանային որջէն հրահանգուած են. մնացեալ մասն եւս իրենք ջնջել տալու:

(Շարունակելի)

Սիւստրէ 6 չոյ.

Լսած էինք որ Վէսէլօ հայ գերաւանական խումբը բաժնուած է երկուքի, մէկը կը պահէ իր հին անունը միւսն ալ կը կոչուի Արեւելեան խումբ: Սակայն տեսած չէինք նորը, առիթ ունե-

ցանք նորն ալ տեսնելու և շիտակը ըսելով թէ և իրեն մէջ կը պարունակէ Պ. Յակոբեանին և Տ. Թասուրեանին նմամ թատերասէր հասարակութեան ծանօթ հին գէմբեր, սակայն նոր ոգեւորութիւն, նոր աւելն:

Արեւելեան խումբը թէ չեմ սխալիր վեց ներկայացումներ տուաւ քաղաքիս մէջ և ամէն անգամին ալ թատերասրահը լիքն էր բազմութեամբ, թէ ի՞նչու մեկնեցաւ ի Ռուսչուք. ուրկէ իբր թէ 10—15 օրէն պիտի վերադառնար ու տակաւին չի վերադարձաւ. չեմ ուզեր ենթադրութիւններ ընել. չեմ կարծեր որ խումբը դժգոհ մնայ մեր քաղաքէն, ընդհակառակը կրնամ ըսել որ սպասուածէն շատ աւելի համակրութիւն վայելեց և քաջալերուեցաւ ալ:

Ըսել է Սիլիստրէցիին անխտիր գիտցաւ կատարել իր պարտքը հանդէպ մեր այդ նոր խմբին, պիտի գիտնայ խումբն ալ փոխադարձաբար կատարել իր խոստումը:

Պիտի տեսնենք:  
Լսած էի ես ինքն ալ տակաւին մանկական հասակիս մէջ, որ ճգնաբար հաճի Համբարձումեան կամ երկուքէն մէկը փափաք յայտնած է և խոստացած քաղաքիս մէջ աղջկանց դպրոց մը շինել տալ. ժամանակին լրագրաց մէջ ևս հրատարակուեցաւ այս լուրը և ամեն ազգայինք անհամբեր կըսպասէր ըսուածին գործադրութիւնը. երկուսն ալ մեռան. նորէն յիշեց ուեցաւ այդ խոստում երկուսին ժառանգորդաց կողմանէ ու նորէն բան մը շտեմուեցաւ վերջը թեր կիւրակէ եկեղեցւոյ մէջ տէր Տաճատ Աղամէն սկսեալ բաներ մը ըսել ուզեց եւ իր վերջ ծա-

նուցման սա հասկցանք որ հանգուցեալ հճ. Մաթէոս աղա հճ. Համբարձումեան 500 ոսկի նւիրած է քաղաքիս եկեղեցւոյ և ազգ. երկսեռ դպրոցաց:

Իսկոյն միտքս եկաւ եղած խոստումները և ինքնիրենս հարցուցի թէ արդե՞ք այս է եղած խոստումը. քահանան որոշ բան մը չըսաւ և արդէն միշտ մութ կը խօսի:

Եթէ այս է, շիտակը ոչինչ եղած գովեստից հանդէպ մանաւանդ որ եթէ կէսը եկեղեցւոյ տանք և մնացած կէսով ալ դպրոց մը շինել ուզինք պիտի կրնա՞նք գլուխ հանել:

Ժամանակը պիտի պարզէ և ցուցնէ:

Այսու հանդերձ ինչ ալ ըլլայ հաճի Մաթէոս աղան ըրած է իր զգացման համաձայն որչափ կըրնայ և մեզ կը մնայ միայն ըսել յիշատակն արգարոց օրինութեամբ եղիցի:

Լսեցինք անակնկալս որ մեր եկեղեցւոյ քահանան տէր Տաճատ պատճառաբանեալ հրաժարական տուեր է թաղականին եւ պիտի մեկնի ի կալաց, հրաժարման պատճառ կը յայտնէ տեղույս կլիմային անյարմարութիւնը եւ իր տկարութիւնը. յանկարծակիի եկաւ թաղականը և ատենադպիր էֆէնտին շատ իրաւամբ դիտեց ի լուր տմեռուն թէ ինչպէս կըրնայ մեկնիլ. եթէ վերջապէս մեկնիլ ալ ուզէ, առանց իրեն յաջորդ մը բերելու:

Տէրտէրը մեկնեցաւ ինքնաբերաբար տեղս եկաւ յայտնի կոնծարան տէր Մկրտիչ քահանայ կրօնիկեան, որ բռնուեցաւ և գընաց ի Ռուսչուք ընտանիքը բերելու համար. քիչ օր վերջ տէր Տաճատ նորէն եկաւ իբր թէ կա-

լացի տէր Ղեւոնդ քահանան մէկ քանի ազգայիններու հետ ամբաստանած է եղիք զինքը թուրք հիւպատոսին իբրեւ հին յեղափոխական մը (որչա՞փ աժանցած է մեր մէջ յեղափոխականը, և սա ալ Ռուսչուք կոռուպորութեան քով դիմումներ կընէ չընդունելու համար տէր Տաճատը):

Տէր Ղեւոնդին ծանօթ և խելահաս մարդիկ չը համոզուեցան արդէն ի սկզբանէ անախ անցուգարցին և ապաքէն հասկցուեցաւ որ անձնական կիրքի համար եղած են բոլորը. սակայն տակաւին շատերը չեն կրնար հասկնալ թէ՛ եթէ այն տեղի օգին անյարմարութեան պատճառաւ մեկնեցաւ Տէր Տաճատ ըստ իւր բանի, ի՞նչու նորէն եկաւ և այս ու այն աղային ոտքն իյնալով ու լիզելով ուրիշ քահանայի մը հացն առաւ բերնէն ուր նորէն տեղս կը մնայ. փոխուած է Սիլիստրէի օգը թէ այլ ևս իւր հիւանդութիւնը անցած է. միւս կողմանէ ի՞նչ ստորնութիւն և անխցճութիւն թաղականի մը կողմանէ, որ ապօրէն հրաժարեալ քահանայ մը բռնուած քահանայի մը տեղ դարձեալ ապօրէն և անխցճաբար կընդունի:

Խեղճ կրօնիկեան լսած իս նայելով բաւական մանր մունր բաներ կը ծախէ և քիչ թէ շատ կահկարասիք նաւը փոխադրել ուղած միջոցին, մի քարոզ նամակի սպասէ հեռագիրը կըստանայ ու շուրաւ կը մնայ:

Վայելուչ բաներ են ասոնք թաղականի մը և քահանայի մը կողմանէ, որ նոր զլխի յեղափոխականի և խելացիի յաւակնութիւնն ունի անձին վրայ:

Ըստ իս թէնճէրէ եռվարլսն մը զափաղընը պուժուչ:

Լսեցի ու իմացայ, որ այս շնորհուեակ Տէր Տաճատը եկած օրէն կաշխատի իրեն իբր որդեգրեալ մէկ աղջիկը վարժուհի գնել տալ և բնաւ ի նկատի չառնելով արդէն օրինաորապէս գտնուած աւելի արժանաւորագոյն և յարմարագոյն վարժուհի մը ներկայութիւնը ասդին կիյնայ, անդին կիյնայ ու վերջապէս կը յաջողի հոգաբարձուն ու թաղականը համոզել իրեն անպատուաբեր և շահախնդիր փաշտը ընդունել տալ. որով ապագայ խել մը անհեթեթութեանց պատճառ և տեղի պիտի տայ:

Ի՞նչ ընթացք է այս. եթէ տէրտէր մը չը մտածեր, այն ալ Տէր Տաճատին նման մէկը. որ բնականին մէջ շունի ասարբեր մտածել, չը կա՞ մեր մէջ մարգ, որ չը խարուի այլ ևս կրօնականաց կեղծուպատիր վարժուհիքն և շողորթութիւն խօսքերէն:

Այստեղ ընթերցարան մ'ալ ունինք, որ իբր թէ աղջային է. վերջերս հինգ հոգիէ բաղկացեալ հսկող կամ գործադիր մարմին մը ընտրուեցաւ անո՞ր յառաջադիմութեան աշխատելու համար. հինգն ալ իրիտասարգ մէկը դերաստութենէ եկած վարժապետ պօզմասը մը. մէկը քիչ թէ շատ Եւրոպա կրթուած. մէկն ալ Եւրոպա պտտած. ըսել է հինգէն երեքը քիչ թէ շատ գաղափարի աէր. օգտակար որոշումներ կըսպասուէին. սակայն լսեցի, ո՞վ որոն մարմինը ի նկատի առնելով ընթերցարանի փոքրիկ գիրքը որոշած է աւելի ընդարձակ տեղ մը վարձել. ուր ի պահանջել հարկին ատենախօսուելներ ալ կարենան ընել, ոսկայն օր մը վերջը նորէն կը փոխուի այդ սրոյշում և կը մնան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՔՕՆ

Ինչ՞ըն Սաքօն, անգամ մը որ բաժնուեց իւր անակից, զգաց այն, ինչ որ մարդու մը սիրտը կարող է գգալը Մինչեւ նաւահանդիստը հասնելը, մի քանի օր ոտքով գնալով, նա բաւական յոգնեցաւ, սակայն այդ յոգնութիւնը Ֆիզիքական չէր. նրան ճնշում էր սեւ խորհրդածութիւնների ծանրութիւնը:

Երեք օր վերջը երեկոյին գեմ Սաքօն նստեց շոգեխաւ գնալու համար Կ. Պոլիս. իր հետ կային նաև շատ մը պանդուխտ հայեր, որ ձգած իրանց հայրենի օջախը գնում էին Պոլիս աշխատելու, դրամ վաստակելու, որպէսզի կարելի լինի կշտացնել թուրքը ու քորդը և պահպանել իրենց գոյութիւնը:

Իր ընկերներից բոլորովին անջատ նստեց նա մի կողմ, սկսեց զիտել

նաւի ընթացքը. Պտուտակը շարժվում էր և իր ետեւից թողնում փրփրադէզ ալիքների կաթնագոյն երկայն և ձիգ հետք մը:

Մովը հանդարտ էր և այնպէս էլ խոստանում էր մինչեւ ճանապարհորդութեան վերջը. Սաքօն աչքերը յառած տեսութեանը առկէն անհետացող երկրին վերև, նայում էր յափշտակուած, ու այդ կացութեան մէջ միտուած մնաց մինչեւ գիշերին կոխելը:

Քաղաքը արդէն շատոնց անհետացել էր տեսութիւնից, նա տակաւին շարունակում էր նայիլ, զիտել այն իրփրոտ հետքը որ շոգեխաւը ձգում էր ետեւից: Յանկարծ նա յուզուեցաւ, լաց եղաւ ինչպէս մի երեխայ, ինկան մտացը մէջ իր սերելի մայրը և Նազօն. Նազօն, որուն յիշատակը ամենից յաման էր. քանի ուզում էր վանել նրան իր մտքից, նա այնքան յամուում էր. ճշմարտան ըսած շատ ալ սիրելի էր Սաքօնի մտածել նազօի մասին. նրա մէն մի շարժումը, մէն մի խօսքը գալիս էին իր աչքերին առաջ. երևակայութիւնով հետեւում էր նրան քաղաւ ատ քայլ

մերթ հրճուում, մերթ վշտանում...

Աստղերն սկսեցին փալկիլ երկինքի կամարին վրայ, լուսինը սփռեց իր արծաթի քողն ծովուն վերև: Լուսնի փաղաքշանքի տակ, նրա մարմինը գողգողում էր ջրային մեղկ թռթրումներով:

Ամէնքն էլ հեռու են հիմայ, Սաքօն ինքնիրեն կը շնջտոր:

— Ահա շնորհիւ աղքատութեան դատապարտուած եմ սարկիլ միայնակ. բան մը չը գիտեմ, բան մը ինձ չի ժպտիր. հեռու հայրենի օջախէն, հեռու իմ սիրելիներէս:

Եւ ի՞նչու այս ամենը. եթէ քորդին առաջակողմ թիւնը, թուրքին գազանութիւնը, վաշխառուին անխցճութիւնը չըլլային, ես ոչ նազօս և ոչ ալ տունէս պիտի յաճնուէի:

Ու միայն ես չեմ այսպէս գժբաղդ այս երկրին մէջ:

զիտել հորիզոնը, այն յորձանքները որ հանդարտ ծովուն երեսին ահօսներ են բանում, սահում և անհետանում հեռուն, շահ հեռուն:

Երկինքը գլխին վերը, անդունդը ստեղծուած, ինքը թափառական, տարաբաղդ:

Այդ գիտումն և յափշտակումն մէջ յանկարծ դարձեալ միտքը ինկան մայրը և նազօն, Բաբայից նրա սիրտը, կրկին ու սկսեց կրկին երեւակայել:

— Ի՞նչ նա մտածում նրանք այն ժամուն, ունին պատառ մը շաց տեսելու:

Յոգնածութիւնը և մտային խոկմանքներ թուլացրին նրա բոլոր ջիզղերը, Ո՛չ բուն, ոչ արթուն դեռ ևս նա երազեց մի վայրիկ, վերջապէս քնացաւ անհանգիստ քնով. և երբ արթնացաւ արդէն հասել էին և շոգեխաւն ձգում էր խարսխը:

Վերջապէս Սաքօն Պոլիսն էր. այդ հսկայ քաղաքին մէջ, ուր իրենց առողջութիւնը հալած ու մաշած էին իր պապերը, որոնք եկած կին բաղդ որոնելու և աւելի գժբաղդացած, ճերայած ու անպէտքացած վերագարձած էին հայրենիք:

(Շարունակելի)

առաջին տեղը, որ փոքրիկ սեն-  
եակ մըն է և հազիւ 10 հոգի  
կրնան նստիլ ու կարգալ, որ կը  
պատկանի մեր մեծ ջոջ Զարար  
աղային. հարցութեան իմացայ,  
որ այս ազան պիտի ցաւի եղեր  
թէ սր իրեն շէնքը թողն, և  
մեր պարտններն ալ միմիայով  
որ մի գուցէ իրենց փառ ալ  
գայ, զի մեր քաղաքին սովո-  
րութիւնն է նիւթապէս և բարո-  
յապէս փրասել որ և է մէկի մը.  
որ չը յարգեր այս կամ այն ա-  
ղային կամքն. ինչ որ ալ ըլլայ:

### ՉԷԶՈՒՄԻ ԲԱՆԱԿՑՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ՇԱՐԺՈՒՄԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



Կը խնդրեմ ձեզմէ ալ, ինչպէս որ  
«Հայրենիք» է և «Զայն Հայրենեաց»  
բարեհաճիք հրատարակել նամակի մը  
հետեւեալ մասը զոր խրկած եմ 1900  
տարւոյ սկիզբները Հնչ. կուսակցու-  
թեան կեդր. վարչութեան:

Այս հատածը կը պարունակէ այն  
պայմանները որոնք երկու կուսակ-  
ցութեանց միջեւ միութիւնը յաջող-  
ցնելու կարող եւ յարմար երեւցած  
են ինձ, եւ զորս առաջարկած եմ  
երկուքին ալ միանգամայն:

Առ կեդր. վարչ. Հնչ. կուսակ. «ասկէ  
առաջ միութեան համար փորձ մը եղած  
է: Այդ առթիւ եղած հրատարակու-  
թիւնները զորս այս օրերս վերաբեր-  
կարգացի ցոյց տալին ինձ միութեան  
խորհրդին ղէմ արգելքները որոնք  
են: Ոսակցութիւններու շարք մը որ  
ունեցայ պն. Արփիարի հետ, ինչպէս և  
հեղինակաւոր դաշնակցականներու  
հետ, զիս բողոքովին լուսաւորեցին  
այս արգելքներուն բնութեանը վը-  
րայ: Համոզուեցայ որ խոչընդոտ ե-  
ղող խնդիրները որք կը բաժնեն  
կուսակցութիւնները, երկու տեսակ  
հն. 1. Անոնք որ կուսակցական են  
և 2. Անոնք որ բուն իսկ յեղափո-  
խական գործին եւ նպատակին կը  
վերաբերին: Դիտեցի, որ զժառա-  
ջոյնները միմիայն առաջիններն են,  
որովհետեւ ատոնք հակառակութեան  
ոգիէ՛ ծնած անձնու խնդիրներ են:

Ատոնք ոչ թէ արամաբանութեամբ  
այլ կը բողոքէ որ լուծելի կուզեն  
ինձ պիտի մնայ աղաչել որ երկու  
կողմն ալ կիրք ցոյց տալէ հրաժարին:

Գալով երկրորդ տեսակին պատկա-  
նող խնդիրներուն, ատոնք պիտի  
կրնան լուծել արամաբանութեամբ  
և փորձառութեան գիտելիքներով:

Աս վերջին աշխատութիւնը առաջի-  
նէն շատ աւելի զիւրին է:

Տեսած եւ ստուգածս ալ թէ  
կուսակցական հակառակութիւնը ար-  
տաղրած է արդէն սա ցաւալի տը-  
ղիւնները, որոնք են.

1. Յեղափոխական ոգւոյն սկարա-  
ցումը:

2. Հալածանք եւ բանբասանք  
ընդհանուր կերպով բոլոր ուսանա-  
չներուն դէմ:

Աւելորդ կը համարիմ պնդել թէ  
«Մարտ» եւ «Նոր Կեանք» էին որ ի-  
րենց յօդածներով սկարացուցին յե-  
ղափոխական ոգին: Այս պատճառա-  
ւէտք է պնդեմ որ այդ թերթերը

վերտանան ոգի մը որ տարբեր ըլ-  
լայ մինչեւ հիմա ունեցածներն էն:

Անխոհեմութիւն է, միւս կողմէ,  
վարկը կտորել բոլոր ուսանաչներուն  
անխորաբար, քանի որ լաւ պիտի  
որ առնցմէ ալ ելան եւ գեո պիտի  
ելլեն յեղափոխական տարրեր: Պն.

Արփիար արդէն ինձ իսկոյն խոստո-  
վանեցաւ որ կուսակցական հակառա-  
կութիւնը սկսել աւած է այս հալա-  
ծանքը: Փոխադարձ հալածանքի է՛ն  
սխառ պատգանբէն մէկն ալ է:

3. «Արփիարի խնդիր» ըսած վե-  
ճին գոյութիւնը: Ոչ ոք պաշտպա-  
նած է Արփիարը մատնչութեան, զըր-  
պարտութեան ղէմ այնքան շերտապէս  
եւ այնքան նիւթապէս որքան ես:  
Այս վեճն ալ իսպառ մէջտեղէն վեց-  
ցնելու համար ապահով եմ թէ պիտի  
յաջողիմ ընդունիլ տալ դաշնակցա-  
կաններուն որ չէզոք անձնու հրա-  
ւէրով կազմի մի դատարան որ քննէ  
այս վեճը վերջնականապէս:

Պն. Արփիար հաւանեցաւ այս ա.  
ռաջարկիս եւ խօսք տաւ յեղափո-  
խութեան վարչական գործերէն քաչ-  
ւիլ, ինչպէս եւ թերթերու խմբագ-  
րութիւնէն:

Ի նկատի ունենալով այս հանդա-  
մանքները, իրերու այս վիճակը,  
կառավարելով միութեան համար իբր  
և առաջին պայման՝ հետեւեալները:

1. Յեղափոխական ոգւոյն զօրա-  
ցումը թերթերուն պարունակութեան  
փոփոխութեամբ:

2. Ռուսաւայելու ղէմ հալածանքի  
դադարումը:

Արփիարի հրաժարումը վարչու-  
թեան եւ խմբագրութեան:

4. Միացեալ մարմինին համար  
ստեղծել, միութեան առթիւ միայն,  
առժամայ մի դատարան երկու կող-  
մի ամբաստանեալներու համար, եւ  
որուն ենթարկի նաեւ պն. Արփիարի  
խնդիրը:

Գալով միացեալ մարմինին անա-  
նը պէտք է

5. Նոր մարմինը կոչել  
Միացեալ հայ յեղափոխականաց  
Եղբայրութիւն  
(Հնչակեան Դաշնակցական եւն.)

Ասիկայ ալ այն խնդիրներն է  
զոր ամէն մէկ յեղափոխական կուզէ  
լուծել ոչ թէ յեղափոխական գործին  
բուն շահերուն՝ այլ իր կուսակցա-  
կան հպարտութեան անսալով: Մին  
փոռասիրութիւն, Գիտեմ հայեր ո-  
րոնց սիրտը իրենց կուսակցութեան  
անունով աւելի յեցած է քան Հա-  
յաստանի եւ կամ ազգին անունովը:

Բայց ես կը հաստատ թէ Միացեալ  
բանով ժողովրդին առիթ պիտի ըն-  
ծայնք պահանջել զուրք մնացած  
յեղափոխականներն որ երթան  
մտնեն միութեան մէջ, իսկ եղբայ-  
րութիւնը բառնալ (որ «Ֆէտէրասիոն»  
իմաստն ալ կը պարունակէ արդէն)  
աւելի լաւ կը բացատրէ ժողովրդին  
մտքին առջեւ կատարելիք միու-  
թեան ոգին եւ ձգտումը, նպատակն  
ու նկարագիրը: Այս մասին օրինակ  
մ'ալ ունի հայ ազգը, երբ որ 1879ին  
Թիֆլիս երթալու «Մշակ» խմբագ-  
րապետ Արծրունիէն աջակցութիւնը  
խնդրեցի կրթական ընկերութիւննե-  
րը միացնելու, Արարատեանը կը  
պնդէր իր յատուկ անունը պահել:

Արծրունի գրեց Արարատեանին սա  
պարզ խօսքը. «Կամ կը միանաք կամ  
զբաւ չեմ զրկուի ձեզ»: Ասոր վրայ  
հրաշքը կատարեցաւ եւ Միացեալ  
ընկերութիւնը անունին սակ կըր-  
ցան մանել, առանց վեասի, թէ  
ըպրոցասիրացը, թէ Արեւիկանը եւ

թէ Արարատեանը, ամէն մին իր  
նախկին անուններէն հրաժարելով,  
Յեղափոխականները ինչու չը վար-  
ւին այսպէս:

6. Նոր մարմինին պաշտօնաթեր-  
թը կոչել Դրօշակ: Յայտնի է թէ օ-  
տարները գիտեն միայն երկու ա-  
նուն Հնչակ ու Դրօշակ: Անխելութե-  
թիւն է օտարներու առջեւ, նոր ա-  
նունով ներկայանալ, հրաժարելով  
այդ երկու անուններուն ալ գործա-  
ծութիւնէն որովհետեւ այդ երկուքը  
տարիներու եւ ահագին զոհողու-  
թիւններու շնորհիւ ճանչցուեր են  
եւ կը ներկայացնեն օտարին առջեւ  
հայ ազգին յեղափոխական ուժը:

Դրամագլուխը, կազմակերպութիւնը,  
Գանի որ հնար չէ գոյ ծածել Հնչակ  
անունը, յեղափոխական ճշմարիտ  
խղճմտանք մը պարքը համարելու է  
պահել գէթ Դրօշակ անունը: Կու-  
սակցական հպարտութիւնը չը պէտք  
է կորսնչել տայ դրամագլուխ մը  
լով այն ողորմելի պատճառով որ այդ  
դրամագլուխը կը կոչուի Դրօշակ:

Հոս կը վերջանան այն կուսակ-  
ցական, փոռասիրական հարցերուն  
շարքը, որոնց լուծման համար վախ  
ունիմ թէ շատերը պիտի նախընտրեն  
հետեւել կիրքերուն քան ողորմառու-  
թեան եւ արամաբանութեան:

Կը մնայ յեղափոխական նպատակին  
ու գործին վերաբերող խնդիրները  
որոնց մասին կառավարեմ:

7. Նոր միացեալ մարմինին առա-  
ջին ընդհանուր ժողովին թողուլ որ  
քուէից մեծամասնութեամբ որոշէ  
վերջնապէս յեղափոխութեան ծրա-  
դիրը որ այլեւս պտրտաւորիլ ըլլայ:

8. Սոյն ընդհ. ժողովին թողուլ  
որ կեդրոնացման եւ ապակեդրոնաց-  
ման խնդիրները ենթարկէ վիճարա-  
նութեան եւ ստոյն մասին տայ վերջ-  
նական որոշում մը քուէից մեծամաս-  
նութեամբ:

Այս երկու պայմանները դրւած են  
այն նպատակով որ իւրաքանչիւր կու-  
սակցութեան անդամք առիթ ունե-  
նան իրենց տաս տարի է իվեր ամ-  
բարած փորձառութեանը հաղորդ եւ  
մասնակից ընել միւս ընկերներին  
եւ թէ ծրագրին ու թէ վարչական  
այլ եւ այլ եղանակներու լաւ ու վատ  
կողմերուն վրայ զերբար իրապէս լու-  
սաւորելով հանսին ապահովապէս էն  
նպատակադարմար ծրագրին կազմու-  
թեան եւ էն լաւ վարչական մէթո-  
տին հաստատման:

9. Երկու կուսակցութեանց ձեռն-  
հաս մարմինները (այսինքն Հնչ. կու-  
սակցութեան կեդր. վարչութիւնը  
մէկ կողմէ, եւ Դաշնակցութեան կող-  
մէ ալ անորմէմք ներկայացնող պա-  
տասխանատու մարմինները) կը նտրեն  
երկուքական կամ երեքական լիա-  
զօրներ եւ ասեմք կը նտրեն հինգերորդ  
կամ եօթերորդ անձ մը որուն կեն-  
թարկի իրենց անհամաձայնութիւնը  
եթէ մեծամասնութիւն չը կրնայ դո-  
յանալ: Լիազօրներու ժողովը քուէից  
մեծամասնութեամբ:

1. Կը կօտարէ երկու կուսակցու-  
թեանց ձուլումը:

2. Կը հոչակէ միութեան կատար-  
ւած ըլլալը:

3. Կը կազմակերպէ Միացեալին  
առժամայ դատարանը:

4. Կորոշէ Միացեալի իմքութեան  
միջեւ յգոուարուին առաջին ընդհ.  
ժողովին:

5. Կորոշէ միացեալ-մարմինին ա-  
ռաջին ընդհ. ժողովին բաղկացման  
եղանակը, գումարման օրը, տեղը,  
այնպէս որ անգամները ներկայանան

այս ընդհ. ժողովին ոչ թէ նախկին  
հնչակեանի մը կամ նախկին գոշնակ-  
ցականի մը գոյնով ու ձգտումով այլ  
արդէն ձուլում, միացած մէկ մար-  
մինի մը հաւասար եւ համանման ան-  
գամներ:

Մօտ երկու տարի է որ Հնչ. կու-  
սակցութեան կեդր. վարչութեան  
հոսուցած եմ նամակս, որուն վե-  
րոգրեալ մասը հրատարակութեան  
կուսամ անոր խորհրդակցական մա-  
սին վրայ այսօր մէկ քանի բառեր եւ  
տողեր կաւելցնեմ միտքս աւելի շեշ-  
տելու համար:

Նոյնիմաստ նամակ մըն ալ զրկած  
եմ Դաշնակցութեան:

Արս հրատարակութիւնը կը նեմ  
ժողովրդին առիթ մը ընծայած ըլլա-  
լու միութեան հարցին վրայ չըջա-  
հայեցութեամբ խորհելու եւ իրեն  
սեփական կարծիք մը կազմելու հա-  
մար:

Ընդունեցէք  
յարգանացս հաւաստիքը  
ՄեծիՍար

### ԲԱՅ ՆԱՄԱԿ

Տ. Վ. Շահիրիւսանի եւ Տ. Լ. Սարգիսեանի



Ուշի ուշով կարգացի թէ՛ Տ.  
Մագմանեանի ձեր մատնութեանը  
մասին հրատարակած դրութիւ-  
նը, և թէ՛ ձեր այս մասին մաս-  
նաւոր յայտարարութիւնով և  
«Մարտ»-ի միջոցաւ, իբր հեր-  
քում, գրուածները:

Ես, իբր ազգային անհատ,  
նեղակայիս ուզում հրապարակաւ  
յայտնելու իմ համոզումներս.  
թէ՛ ձեր տուած բացատրութիւն-  
ները ոչ թէ խնդրոյն գոյութիւ-  
նը կը հերքեն, այլ ընդհակա-  
ռակը, ձեր խոստովանութիւնովը  
մատնութեան տեղի ունեցած ըլ-  
լալը բացարձակ կերպով կը հաս-  
տատեն:

Խնդրոյն մանրամասնութիւն-  
ներուն մէջ ձեր գրիչէ «հարըշ-  
ներ»-ը որչափ որ կուզէք մէկզմէ-  
կու ղէմ շարունակեցէք: Խղճա-  
միւ մարդոց համար բաւական է,  
որ դուք կը խոստովանիք մաս-  
նութեան գոյութիւնը, բայց  
ճարպիկ դարձուած քննելով մէկզ-  
մէկու վրայ ձգել կը ջանաք:

Եզրակացութիւնս՝  
1. Եթէ այս մատնութեան գա-  
ղափարը Լեւոն Սարգիսեան յգա-  
նալով գրիչի առած է, ուրեմն,  
Տ. Շահիրիւսան, դուք ալ անոր  
գրածին չը հաւանելով ուրիշ մը  
գրած ըլլալնուդ համար ՄեծիՍա-  
րի՞ք էք:

2. Իսկ եթէ Լեւոն Սարգիսեան  
«միմիայն» գաղափարը յղացած և  
դուք, Տ. Շահիրիւսան, այդ գա-  
ղափարին հաւանութիւն տալով  
ձեր տաճկիւնի մէջ ունեցած  
հատուկութեանով գրիչի առած էք  
զայն, ուրեմն այն ատեն երկուք-  
նիդ ալ մատնութիւն ըրած էք  
«հաւաստարարապէս»:

Պե՛ՏՐՈՍ Գ. ՊՈՒՍԵՑԻԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ատեն մը գործունէութեան լայն շրջան մը ունեցաւ Շում- լայի հայը. կը յիշեն անշուշտ հնարժուգի ընթերցողներ, վե- վէտաի ճշգրիտ թղթակցութիւն- ները ուր կը տեսնուէր ազգայնոց բարենպատակ ձեռնարկներուն յաջող արդիւնքը, ըսեմ որ Շում- լացիին ունեցած է միշտ իր գո- վիլի կողմերը վասն զի, յաջո- ղութեամբ ելած է ամեն գործու- նէութեանց տակէն: Մի փոքր օրինակ. Տիկնանց բարեգործա- կան ընկերութիւնը զոր 4 տարի շարունակ ձրի ուսում և արուես- տի սէրը մտցուց տհաս մտքերու մէջ իր բացած մանկապարտէզով և արհեստանոցով:

Ինչոք ընկերութիւնը գրեթէ լուծուած է, բայց մի քանի ջա- նասէր տիկիներ և օրիորդներ նկատելով անոր օգտակարութիւնը պիտի աշխատին վերակենդա- նացնելու և աւելի շէնցնել զայն: Իր գործունէութեան վրայ ման- րամասնութիւններ յաջորդ ան- զամի կը թողում:

Աւելինք երկտասարդութիւն մը, օժտուած նոր գաղափարներով «րոնք գրեթէ» առանց բացառու- թեան ամէնքն ալ խնդրոյ մը շուրջը բոլորուած են ու կաշխա- տին միջին միջոցով մը տալու ըն- թերցարանին, թատրոնին և լսարանին: Ընթերցարանը փո- խադրուած է ընթերցարանի ընդար- ձակ տեղի մը մաքուր ու կահա- քուած և աւելի 50է աւելի վճա- րող անդամներ:

Ընթերցարանին ատենապետը պ. Ասլան համակրելի երիտասարդ մը, մեծ եռանդ ցոյց կուտայ իր ասպարէզին մէջ. յոյս ունիմ թէ այս ձեռն պիտի կրնանք մի քա- նի ներկայացումներէ հանդիսա- տես ըլլալ, շնորհիւ պ. Ասլանի և Գործ ժողովոյ անդամոց. մի քանի շաբաթէն բախտ պիտի ունենանք ատենելու առաջին ներկայացումը ի նպատակ վարժա- րանաց և ընթերցարանին, ներ- կայացուելիք խաղն է Ֆլ. Ն. Ֆէր- ԼՈՒՑՑԻՆ ԹԵՐԵՐԷՆ ԼԵՂՈՒՄ:

Յումլա 7 նոյ. ԿԱՅԻ

«ԳԵՂՈՒՆԻ»

«ԲԱՋՄԱՎԷՊ» ի նմազարութեան այս նոր թերթի անդրանիկ պրակը հրա- տարակուած է հետեւեալ պարունա- կութեամբ:

ԵՐԵՄ. Հ. Ս. — Գեղունի (Նկարա- զիր արեգեբահոնչակ երգապետաց և Վենետիկոյ ներկայ գեղարուեստի ցու- ցահանդէսին և այլն):

Թրքահայ զէմքեր (Պ. Օտեան. — Ս. Մայրապետ Գալֆայեան. — Տօքթ. Փէշտրիմալճեան):

ԷՓՐՈՒԿԱՆ Հ. Ս. — Դաւրէթ (տե- ղեկադրական նկարագիր):

- ՊԱՏԿԵՐՆԵՐ
1. Իտալ. երաժշտական փառքերու Ռոսսինի. Պերլինի. Տոնիժէթթիի և Վերտիի խմբանկար:
2. Ապաստան մեղաւորաց (Վենետի- կոյ ցուցահանդէսին սրտաշարժ պատ- կեր):
3. Դարձ ձկնորսութենէ (գլուխ գործոց սանիմարքոցի Անքեր Միքա- յէլ նկարչի. զարդ Վենետիկեան ցու- ցահանդէսին):
4. 5. Այս տարուան մէջ վախճան- եալ երկու հուշակաւոր իտալ. նկա- րիչներու զուլի գործոցներուն գե- ղեցիկ պատկերներ:
6. Պ. Օտեան:
7. Ս. Մայրապետ Գալֆայեան:
8. Տ. Փէշտրիմալճեան:
9. Դաւրէթի Թամարեան մանկա- պարտէզի աշակերտաց խմբանկար:
10. Դաւրէթի Բերդաթաղի տեսա- րանը:
11. Դաւրէթ քաղաքի բնդհանուր տեսարան:
12. Դաւրէթի Հայ Օրիորդաց Թա- մարեան ուսումնարանը:

Կ Ո Ղ Ք Ը

Կողքը արտաքսպէս զարգարուած է գրքերու ծանուցումներով: Կըն- գունուին յայտարարութիւններ. իւ- րաքանչիւր տող կարծէ 50 սանթիմ: Կողքը ներքին երկու երեսներուն վրայ կը պարունակէ ժամանակակից ազգային նոր և կարեւոր տեղեկու- թիւներ, քաղուած հայ լրագիրնե- րէ: Բաց աստի բազմաթիւ նոր գիւ- տերու վրայ տեղեկութիւններ: Ա- մէն ի միասին հրատարակուած են մանրատառ ութը երկայն սխեմանե- րու մէջ:

«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի եր- կու ամիսը մի անգամ:

Տարեկան բաժնեկիցին է 3 ֆրանք 1 րբլ. 50 կոպէկ:

Թերթէս գոյացած մաքուր հասոյ- թին կէսը առանց կրօնքի խտրու- թեան, կը յատկացնենք «Ազգի» որ- րիկներուն:

Ապառիկ բամբակոյրագրութիւն բա- ցարձակապէս չընդունուիր զինք կան- խիկ է:

Բաժնեկիցին, Նամակ, և այլն ուղ- ղակի հետեւեալ հասցէին յղելու է:

«ԲԱՋՄԱՎԷՊ»

Ս. Ղազար Վէնէտիկ (Թաալիա)

Ռուսաստանի եւ Ամերիկայի ազ- գայինք Գեղունին զիրաւ ստանալու համար կարող են զիմել հետեւեալ մեր գործակալաց:

Ռուսաստան.— Գալուստ Գալուստեան Թիֆլիս

Ամերիկա.— «Հայրենիք» Բիւպլի- շինկ քօմբանի (61 Էսէքս սթր.) Պոսթօն Մաս

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Ազատ Խօսք» է կիմանանք որ Մանչեսթրի հարուստ վաճա- ռական Մարտիրոս Թօքաղեան 20,000 անգլ. ոսկի յատկացու- ցեր է ազգօգուտ հիմնարկու- թիւններու:

Կը կարծուի թէ այդ գումա- րով կրթական հաստատութիւն մը պիտի հիմնուի ուր պիտի ըն- դունուին 50 ի չափ յաջողակագոյն աշակերտներ թրքահայ գարոց- ներէ:

Կրթարանը պիտի հաստատուի Անգլիոյ կամ Գերմանիոյ մէջ, ունենալով բարձրագոյն երկրոր- դական վարժարանի ծրագիր մը, զոր աւարտելէ ետքը աշակերտ- ները կարող պիտի ըլլան հետե- լելու համալսարանի դասընթացք- ներուն, շարունակելով ապրիլ հայ կրթարանին մէջ՝ հոն դասա- խօսելով ստորին կարգերուն: Մասնաւոր խնամք պիտի տար- ուի տոհմային դաստիարակու- թեան, լեզուի, գրականութեան ու պատմութեան ուսուցումին:

— Ամերիկայի Լին քաղաքի որրախնամ ընկերութիւնը 30 ոսկի զրկեր է պատրիարքարան կարօտելոց համար:

— Խաստուր գիւղի կարօտեալ- ցերու համար 20 ոսկի զրկուեր է պատրիարքարանէն:

— Աղբակի մէջ Ջանչեանց որբանոց մը բացուեր է և պատ- ըրարքարանը սկսեր է նպաստել:

— Տիխիսի մէջ այրի տիկին Եղիսաբերթ Սուլխանեանց 1150 ռուպլի կտակեր է եկեղեցիներու և երկու տղայ, մանչու աղիլի, որդեգրելով, ուսման ու ապ- ըուստի պիտոյն յանձն առեր է:

— Յոյն բարեգործ Որէֆանո- վիչին հայ աղքատներուն կտակած 200 ոսկին պատրիարքարանի յանձնուեր է:

Էրզրումի մէջ տեղի ունեցած երկրաշարժէն ֆրասուեր են Մայր եկեղեցին, աղջային և Սանա- սարեան վարժարանները. պատ- ըրարքարանէն 100 ոսկի զրկուած է ֆրասուածներուն:

— Այս համարէն պիտի ոկսինք հրատարակել պ. Մխիթարին (Չէզոք) նամուկները որ կը պա- ըունակեն իՄութեան մասին իր ըրած բանակցութիւններուն մանրամասնութիւնները:

Մենք մտադիր էինք միայն ամփոփ կերպով անոնց բովան- ղակութիւնը հարորդել մեր ըն- թերցողներուն, սակայն այնքան շատ են հետաքրքիր կէտերը որ աւելի լաւ համարեցինք ամբող- ջովին հրատարակել:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Յ. Խաչիկեան, ձեր Դէս ու Դէ- նին ուղղած պատասխանը միւս համարին մէջ կը սպաղրենք:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ի՞նչուք կառավարութիւնը Պանք Օթոմանին հետ բանակցութեան մտած է կարեւոր փոխառութիւն մը ընելու համար:

— Պուլէն կը հաղորդեն որ կրէ- տէի միջազգային զօրքերը յու- նական զօրքով փոխարինելու լուրը անհիմն է:

— Ամերիկեան կառավարու- թիւնը շուտով պիտի 300 հազար ֆրանք յանձնէ Սթօնը առեւան- զող աւազակներուն:

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Աթէնքի մէջ միթինգ մը տե- ղի ունեցեր է որուն մասնակ- ցած են 20,000 հոգի:

Ռուսնոցներու և զինուորներու միջև ընդհարում տեղի ունեցնր է: Միթինգէն վերջը ցոյցընողնե- րը քաղաքի փողոցներէն անցեր են: Քանի մը հոգի յարձակում գործեր են նախարարապե- տին վրայ, բայց չեն վիրաւո- րեր:

— Ասթը և Ագրօ բոլ թերթե- րուն խմբագրատունները զին- ուորներով կը պաշտպանուին: Կան սպաննուածներ և բաւական վիրաւորուածներ:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՄ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ զիմում ընելու համար պէտք է զիմել հետեւեալ հասցէով Իւնիսն Տէ Զիդիսիսիան Արւ. Լիօնքոս րիւ ջը Լիօն ջը Շիւլի 2

Սուխ Ժընէվ Կարգոյիր Յանձնաժողով

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ

Նոր Ընթերցարան (պատկերազարդ) Առաջին տարի

(Երկրորդ տպագրութիւն բարեփոխ- ուած) Դիւն 70 Մնթ.

Կը ծախուի Վասնայ Մ. Գալթակ- ճեանի քով:

Отговорникъ: Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна